Քննարկվել է հաստատության
Մանկավարժական խորհրդի
15.05.2023թ. թիվ 11 նիստում
Տնօրեն Ք.Ահարոնյան

Հաստատվել է հաստատության
Կոլեգիալ կառավարման խորհրդի
27.06.2023թ. թիվ 05 նիստում
Նախագահ՝ Ա. Եսայան

ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի ուսանողների կարիքների վերհանման քաղաքականություն և հայեցակարգ

ԳՅՈՒՄՐԻ 2023

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կարգը սահմանում ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Ուսումնարան) ուսանողների կրթական, սոցիալ-մշակութային, կարիքների մշտադիտարկման, ուսումնասիրման, բացահայտման և դրանց բավարարման գործընթացները՝ Ուսումնարանում որակյալ ուսանողակենտրոն կրթական միջավայր ապահովելու նպատակով

1.2 Ուսումնարանում մասնագետների պատրաստմանն ուղղված գործունեությունը նպաստում է ուսանողների անձի ստեղծագործական, հոգևոր և ֆիզիկական հնարավորությունների զարգացմանը, բարոյականության, առողջ կենսակերպի ամուր հիմքերի ձևավորմանը, հանրապետության հասարակական, տնտեսական և մշակութային կյանքին մասնակից լինելու պահանջմունքի ձևավորմանը:

1.3 Ուսանողների կարիքների վերհանման ընթացակարգը ռազմավարական առաջնահերթություններից մեկն է, որի իրականացման համար կազմակերպվում են մի շարք միջոցառումներ. սոցիոլոգիական հարցումներ, ֆոկուս խմբեր, հանդիպումներ, աշխատանք ուսանողական խորհրդի հետ, տեղեկատվության, խորհրդատվության տրամադրում և այլն:

2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ, ՆԵՐԴՐՎԱԾ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

2.1 Ուսանողներն ընդգրկված են ՄՈՒՀ-ում գործող Կառավարման, Ուսանողական խորհուրդներում, որը հնարավորություն է տալիս մասնակցելու ուսանողակենտրոն քաղաքականության մշակման գործընթացին, բարձրաձայնելու ուսանողական իրավունքների և շահերի պաշտպանության խնդիրները:

2.2 Ղեկավար կազմի և ուսանողների անմիջական անարագել հանդիպումների կազմակերպում

2.3 Ուսումնարանում յուրաքանչյուր կիսամյակի ավարտին իրականացվում են սոցիալական հարցումներ, որոնք թույլ են տալիս պարզել ուսանողների խնդիրները, կազմակերպվող կրթադաստիարակչական աշխատանքների գոհունակության, բավարարման աստիճանը, ինչպես նաև հաշվի առնել ուսանողների կարծիքներն, առաջարկները: Հարցումների իրականացման շնորհիվ ի հայտ եկած խնդիրները քննարկվում են մանկավարժական խորհուրդում և ձեռնարկվում համապատասխան քայլեր:

Ուսանողների կարիքների բացահայտման նպատակով Ուսումնարանում սահմանվել են համապատասխան կարգեր՝

- ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և շրջանավարտների հարցման կարգ- 2022
- ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի Գործատուների կողմից շրջանավարտների վերաբերյալ գոհունակության հարցում- գնահատման կարգ- 2022

- ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի ծնողների հարցում- գնահատման կարգ- 2022

2.4 Ուսանողների կարիքների վերհանումը իրականացվում է դասղեկների կողմից: Շաբաթական մեկ անգամ անցկացվում է դասղեկի ժամ, որի ընթացքում դասղեկը կազմակերպում է խորհրդատվություն, հրավիրում ծնողական ժողովներ, կազմակերպում է տարատեսակ միջոցառումներ: Նպատակը յուրաքանչյուր ուսանողի անհատական, բարոյահոգեբանական կերպարի հետ ծանոթացումն է՝ միտված նախասիրությունների, կարողությունների, ֆինանսական վիճակի բացահայտմանը, դրանց լուծման հնարավորություններն ու խոչընդոտները վերհանելու նպատակով

2.5 Ուսումնարանում գործում են մի շարք խորհրդատվական ծառայություններ, որոնց նպատակն է ուսանողների տեղեկատվության մակարդակի բարձրացումը, բոլոր տեսակի հարցերին սպառիչ պատասխանների տրամադրումը, սեփական իրավունքների և պարտականությունների շուրջ իրազեկության բարձրացումը

- **Խորհրդատվական աջակցություն հանրակրթական առարկաներից**. ցանկացած օր, ցանկացած ուսանողի համար հանրակրթական առարկաների դասախոսներն իրականացնում են խորհրդատվություն, անհասկանալի հարցերի պարզաբանումներ,
- **Խորհրդատվություն պետական ավարտական և պետական որակավարման քննություններից առաջ**. այն առավել ինտենսիվ կազմակերպվում է ուսումնառության վերջին կիսամյակի ընթացքում բոլոր ավարտական կուրսերի ուսանողների համար :
- **Ընթացիկ մասնագիտական խորհրդատվություններ**. Ուսումնարանի արհեստանոցները դասերից հետո բաց են բոլոր ուսանողների համար, առաջադրանքներ կատարելու և վարպետից խորհրդատվություն ստանալու նպատակով:
- **Խորհրդատվություն կարիերայի ուղղորդման կենտրոնի կողմից**. Կենտրոնի պատասխանատուն պարբերաբար անցկացնում է կարիերայի ուղղորդմանն ուղղված խորհրդատվություններ, դասընթացներ ուսանողների, շրջանավարտների, դիմորդների համար, կազմակերպում է այցելություններ գործատուների մոտ, բաց դռների օրեր:
- **Կարճաժամկետ դասընթացներ**. Դիմողների համար իրականացնում է կարճաժամկետ դասընթացներ.

2.6 Ուսումնարանի ղեկավար կազմը վերլուծում և վերհանում է խնդրահարույց ուսանողների հարցերը (ցածր առաջադիմություն, ֆինանսական անապահովվածություն և այլն), պարզում հեռացումների, վերականգնումների պատճառները և տրամադրում է խնդիրների լուծման տարբերակներ

3. Ուսանողների կարիքների վերհանման և խնդիրների լուծման քաղաքականությունը

3.1 Ուսումնարանը մշտապես վերանայում է իր քաղաքականությունը ուսանողների կարիքներին և ժամանակակից պահանջներին համապատասխան.

3.2 Անցկացված հարցումների և փոխադարձ հանդիպումների արդյունքում կատարվում է ուսանողների կարիքների, պահանջների պարզում, վերլուծություն և համապատասխանաբար կատարվում մասնագիտական կրթական ծրագրերի վերանայում

3.3 Ուսանողների հարցումների և առաջարկների հիման վրա իրականացվում է դասախոսական կազմի աշխատանքների վերահսկման հետ կապված միջոցառումների իրականացում

3.4 Ուսումնական պլանների վերանայում ժամանակակից պահանջներին համապատասխան:

3.5 Դասապրոցեսի ավարտից հետո Ուսումնարանն իր ռեսուրսները տրամադրում է ուսանողներին (համակարգչային լսարան, գրադարան)

3.6 Ուսումնարանում առկա է նաև սոցիալական ձեռնարկություն և գործող ուսանողական ընկերություններ, որոնց անդամագրվելով ուսանողները հնարավորություն են ստանում զարգացնելու իրենց ձեռնարկատիրական, հաղորդակցման, թիմային աշխատանք կատարելու հմտությունները

3.7 Ուսումնարանի ղեկավարությունը մշտապես աջակցում և ուսման հնարավորություն է ստեղծում կարիքավոր ուսանողների համար:

3.8 Ուսումնարանի վարչական աշխատակազմի կողմից մշտապես ուսումնասիրվում և վերլուծվում են Կարիերայի ուղղորդման կենտրոնի, պրակտիկայի, մեթոդմիավորումների հաշվետվությունները և սահմանվում համապատասխան վերահսկողական մեխանիզմներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 սույն կարգը հրապարակվում է ուսումնարանի պաշտոնական կայքում

4.2սույն կարգը տարածվում է՝ այն կիրառման մեջ դնելուց հետո ծագած հարաբերությունների վրա

4.3 կարգը վերանայվում, փոփոխության է ենթարկվում ըստ անհրաժեշտության

4.4կարգը քննարկվում է մանկավարժական խորհրդի նիստում, հաստատվում կամ նրա մեջ փոփոխություններ կատարվում են ուսումնարանի կառավարման խորհրդի որոշման հիման վրա: